

ՀՅ ԱՌՈՂՋԱՎԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՇԵՐԱԶ ՁՆԴՈՅԱՆ

Ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասաբար ազդեց ՀՅ բնակչության սոցիալական, այդ թվում՝ առողջապահական ծառայությունների փաստացի մատուցման մակարդակի վրա, որի հետևանքով բյուջետային ֆինանսավորումը նվազեց, կրծատվեցին առողջապահական տարբեր ծրագրեր ու բնակչության գգալի հատվածի առողջապահական ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը: Այսպես՝ 2009 թ. պետական բյուջեն առողջապահության մասով կատարվեց 85%-ով, կամ փաստացի կատարված ծախսերը նախատեսվածից պակաս էին 9,9 մլրդ դրամով, իսկ 2010 թ. պետական բյուջեի փաստացի ծախսերը շեղվեցին կայուն գարգացման ծրագրի նպատակակետից 26,0 մլրդ դրամով, իսկ 2011 թ. հաստատված պետական բյուջեի մասով՝ 40,8 մլրդ դրամով, 2012 թ. առողջապահության ոլորտի ծախսերը կատարվել են 96,2%-ով կամ 2,55 մլրդ դրամով պակաս¹:

Դրա պատճառով նվազում է առողջապահական ծառայություններին դիմող և, հետևաբար՝ աճում ինքնաբուժությամբ զբաղվող անձանց թիվը, որի բացասական հետևանքներն ակնառու են: Այս իրավիճակում ՀՅ կառավարությունը, սկսած 2010 թ. հուլիսից, ներմուծեց առողջապահության ծառայությունների պաշտոնական համավճարի ինստիտուտը, որը լայն տարածում ունի միջազգային պրակտիկայում: Պաշտոնական համավճարների և ընդհանրապես վճարովի ծառայությունների տեսակարար կշռի աճը երկակի նշանակություն ունի: Այն ավելացնում է ոլորտի և բուժիաստատության ֆինանսավորման բացարձակ մեջությունը, բուժումը ամբողջ ծավալով և որակյալ իրականացնելու, հիվանդի կողմից առողջապահական ծառայությունից լիարժեք օգտվելու հնարավորությունները: Մյուս կողմից այն նվազեցնում է առողջության ծառայություններին դիմող անձանց հնարավորությունները և մոտիվացիան: Պատկերը առավել ամբողջական դիտարկելու համար նշենք, որ առողջության ծառայությունների համար պաշտոնական համավճարները, փաստորեն, փոփոխություն են առաջացնում վերաբաշխման համանանություններում: Երևանում համավճարը առողջապահական ծառայությունների գնի մեջ հավասար է և/կամ գերազանցում է պետական պատվերի ֆինանսավորումը 30-50%-ով, իսկ առանձին դեպքերում՝ 2 անգամ: Մարզերում համավճարը ծառայության գնի մեջ կազմում է 50-ից մինչև 100% և ավելի:

Նգնաժամի հետևանքով աղքատ բնակչության գգալի մասի համար

¹ Տե՛ս «Կայուն գարգացման ծրագիր», «ՀՅ պետական բյուջեի կատարման 2009, 2010, 2011, 2012 թվականների հաշվետվյուններ», <http://www.mfinfin.am>

կտրուկ նվազել է առողջապահական ծառայություններից օգտվելու մատ-չելիությունը, իսկ մեծությամբ չիմնավորված համավճարները խորաց-նում են այդ միտումը՝ այն տարածելով նաև ոչ աղքատ բնակչության վրա: Այսպիսով, եթե խնդիրը դիտարկում ենք առողջության ապահովագրու-թյան և զբաղվածության, հիվանդների անհատական վճարումների հարա-բերակցության համատեքստում, կարող ենք արձանագրել, որ համակար-գի ֆինանսավորումը դառնում է ավելի խոցելի: Ի դեպ, միջազգային պրակտիկայուն նման վիճակ արձանագրվել է Արգենտինայում 2001-2002 թթ. տնտեսական ճգնաժամի ընթացքում, որտեղ առողջապահությանն ուղղվող միջոցները առավելապես վերաբաշխվեցին ֆինանսական ավելի մեծ վճարումներ պահանջող ոլորտներին՝ ախտորոշում և հիվանդանոցա-յին բուժօգնություն: Աղքատ բնակչության զգալի մասը կորցրեց առողջա-պահական ծառայություններից օգտվելու հնարավորությունը, դրանք հա-սու դարձան միայն ավելի ունեսող քաղաքացիներին²: Արգենտինայի իրա-վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջապահական համակար-գը խոցելի է տնտեսական ճգնաժամների նկատմամբ՝ առողջության ապա-հովագրության, զբաղվածության և հիվանդների անհատական վճարում-ների կախվածության կապը բավականաչափ էական լինելու պատճառով:

ՀՀ-ում ստեղծված իրավիճակում ամենակարևոր հարցադրումն այն է, թե հետճանաժամային փուլում, երբ բնակչության եկամուտների աճը և առքատության մակարդակը դեռևս դրական միտումներ չեն արձանա-գրել, այլ շարունակում են նվազել է, ինչքա՞ն և ո՞ր համանասնությունն է ընդունելի հիվանդանոցային ծառայությունների պետպատվերի և հա-մավճարի սահմանման համար: Այլ կերպ ասած՝ ո՞րն է դրա օպտիմալ միջակայքը, որի սահմաններում այն կազդի դրական, իսկ դրանից այն կողմ՝ պաշտոնական համավճարի և ֆինանսավորման ընդհանուր աճը կուղեկցվի առողջության պահպանման համար առողջապահական հաս-տատություններ դիմելիության նվազումով, հետևապես համավճարը կվերածվի բացասական գործոնի:

Նման լայն քննարկում ՀՀ կառավարությունը և առողջապահության նախարարությունը պաշտոնական համավճարի ներմուծումից հետո չեն արել: Այս հարցադրումը պահանջում է համապատասխան չափորոշիչնե-րի ամրագրում և հիմնավորված լուծում: Դրան, ի դեպ, պետք է մասնակից լինեն ոչ միայն առողջապահության նախարարության և համակարգի մաս-նագետները, այլև կառավարության իրավասու և շահագրգիռ օղակները, օրենսդրի ներկայացուցիչները, այդ թվում ՏԻՄ-ի ավագանիների, քաղա-քացիական հասարակության կառույցները: Որպես դրա սահմանման չա-փորոշիչ առաջարկում ենք դիտարկել ՀՀ-ում աղքատության փաստացի մակարդակի ցուցանիշը և դրա վարքագծի դիմամիկան, պետքյուշեի ա-ռողջապահության ոլորտին ուղղվող ֆինանսավորման ծավալը, դրա մե-ծության և ՏՍԱ-ի հարաբերակցությունը, այդ ցուցանիշների միտումները,

² Steu Leonora Cavagnero, Marcel Bilgerc, Equity during an economic crisis: Financing of the Argentine health system, Journal of Health Economics, 29 (2010), էջ 479–488, <http://cdi.mecon.gov.ar/doc/sd/6.pdf>, journal homepage: www.elsevier.com/locate/econbase

սպառողական զամբյուղի կառուցվածքում առողջությանն ուղղվող մասնաբաժնի մեծությունը, դրա դիմանիկան: Նպատակահարմար է նշված ցուցանիշների փոփոխման միտումները դիտարկել՝ սկսած 2008 թ. առ ուսումնասիրության պահը: Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ խնդրո առարկա համանանության սահմանան և դրա չափորոշիչների ընտրության հարցը պահանջում է առանձին ուսումնասիրություն, ուստի դուրս է սույն հոդվածի նպատակներից:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) ֆինանսատնտեսական ճգնաժամի միջոցառումների առիթով բարձրացրեց ընդհանրապես առողջապահական գործունեությանը վերաբերող մի շարք հիմնարար հարցեր, որոնցում շեշտվում են տարբեր հաստատությունների գործունեության կրկնության և ավելորդ ներթափանցման նվազեցումը, անհատական ծրագրերի բազմապատիկ (սիներգիկ) ուժեղացման ապահովումը³:

Այս տեսանկյունից անդրադառնանք ՀՀ առողջապահական համակարգում ֆինանսավորման կոնկրետ խնդիրներին: 2006 թ. սկսած՝ ՀՀ-ում բնակչության պոլիկլինիկական առաջնային օգնությունը անվճար է և իրականացվում է պետական պատվերով՝ բյուջետային ֆինանսավորման հաշվին: Ինչպես նշվում է ԱՀԿ-ի 2009 թ. «Ֆինանսական ճգնաժամ և գլոբալ առողջապահություն» բարձր մակարդակի խորհրդատվական գեկուցում, առողջության սոցիալական պաշտպանությունը այն ռիսկերի միավորումն է, որոնք կանխվում են առողջապահության բյուջետային ֆինանսավորման և ապահովագրական ֆինանսավորման միջոցով, իսկ վերջինս այդ համադրության կարևոր բաղադրիչն է⁴: ԱՀԿ-ի բոլոր գեկուցներում հիվանդությունների կանխարգելմանը սատարելու կայուն մոտեցումը մնում է անփոփոխ, որը մեզ մոտ իրականացվում է պոլիկլինիկական ծառայությունների միջոցով:

2011 թ. սոցիալական փաթեթի շրջանակներում ներդրվեց առողջության ապահովագրության բաղադրիչը, որի ֆինանսավորումը ապահովագրվող անձանց համար փաստացի կատարվում է պետական բյուջեից, ընդգրկում է քաղաքայողների, պետական այլ ծառայողների և հանրային ծառայողների լայն զանգվածը: Նկատենք, որ դրա ներմուծումը զգալիորեն մեծացրեց առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Մինչդեռ այն ունի երկակի մեկնաբանություն. որքան էլ որ դրա ֆինանսավորման միջոցները հատկացվում են բյուջետային խողովակով, դրանք անձի վաստակած սեփական միջոցներն են: Սոցիալական փաթեթի վերաբերյալ պետության գաղափարախոսությունը այն է, որ հնարավոր չէ նշանակալի չափով բարձրացնել բոլոր քաղաքացիական և հանրային ծառայողների վարձատրությունը, իսկ սոցիալական փաթեթի ուղղություններով հատկացված լրացուցիչ միջոցները թույլ են

³ Տես «Доклад Консультации высокого уровня. Всемирная организация здравоохранения». «Финансовый кризис и глобальное здравоохранение». Женева, 19 января 2009 г. http://www.who.int/mediacentre/events/meetings/2009_financial_crisis_report_ru_.pdf

⁴ Տես նույն տեղը:

տալիս պահպանել հավասարությունը՝ բոլորին տրամադրել առաջնահերթ անհրաժեշտ ծառայություններ:

Երկու համակարգեր՝ անվճար առաջնային պոլիկլինիկական օգնության և սոցիալական փաթեթի առողջապահության ապահովագրության առկայության դեպքում միևնույն անձը իրավունք ունի և իրականում ստանում է նմանատիպ առողջապահական ծառայություններ երկու ֆինանսավորման խողովակներից միաժամանակ՝ պետապատվերով՝ իրեն սպասարկող պոլիկլինիկայից և սոցիալական փաթեթով՝ առողջության ապահովագրության ծևաչափով հիվանդանոցային բուժհաստատություններից՝ վճարովի հիմքով, որի ծառայությունները հատուցում է ապահովագրական ընկերությունը: Խնդիրը վերաբերում է շուրջ 120 հազ. անձանց, որոնք օգտվում են սոցիալական փաթեթի ընձեռած առողջապահական ապահովագրության հնարավորությունից: Կարող ենք արձանագրել, որ պետության բյուջետային սահմանափակ ֆինանսական հնարավորությունների և քաղաքացիների ցածր վճարունակության դեպքում ուղղակի շռայլություն է միևնույն անձի համար առողջապահական համարժեք ծառայությունների կրկնակի ֆինանսավորումը: Այլ հարց է, թե անձը դրամից օգտվում է, թե ոչ, սակայն միանշանակ իրավունք ունի օգտվելու, քանի որ դրա ֆինանսավորումը իրականացված է: Նկատենք, որ որոշ դեպքերում այդ կատեգորիայի անձինք իրականում միաժամանակ օգտվում են երկու՝ պոլիկլինիկայի անվճար և ընտրովի բուժհաստատության ծառայություններից (այդ թվում նաև ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված մասնավոր պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բուժհաստատությունից)՝ ըստ ընձեռած հնարավորությունների: Այստեղ կարող ենք դիտարկել մի քանի գործոն ևս:

Առաջինը, առողջապահության տարբեր մակարդակի ծառայությունների միջև փոխազդակցությունը՝ ի նպաստ հիվանդի: ՀՀ-ում պոլիկլինիկական և հիվանդանոցային ծառայությունների միջև փոխազդակցության խթանող սխեմա չկա: Դրանցից յուրաքանչյուրը հիվանդի հետ հարաբերությունները կարուցում է իր ծևաչափի շրջանակներում՝ հնարավորինս չեզոք դիրք գրավելով նախորդ կամ հաջորդ մակարդակի ծառայության հանդեպ. նպատակ և համապատասխան սխեմա չի դրված, որպեսզի տարբեր մակարդակների բուժհաստատություններում հիվանդը բոլորի կողմից դիտվի որպես բուժնան կամ առողջապահական ներգործության մեկ օբյեկտ՝ առողջապահական ծառայություններ մատուցած բոլոր մասնակիցների համատեղ պատասխանատվությամբ:

Այնուամենայնիվ արձանագրենք, որ բնակչության մի ստվար հատվածի առողջապահական համանման կամ գրեթե չտարբերվող ծառայությունների խմբի համար վճարվում է երկու անգամ կամ կրկնակի: Տարբերությունն այն է, որ սոցիալական առողջության ապահովագրության 52 հազ. և 3.800 հազ. ՀՀ դրամ ապահովագրական գումարի կամ ծածկույթի բազային փաթեթով (ներկայացված է «Ոլոգոսստրախ-Արմենիա» ընկերության օրինակով⁵, որը ուղղակի չի տարբերվում մնացած ընկերություն-

⁵ Տես «ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք, Սոցիալական փաթեթ, Առողջության ապահովագրության ծառայություններ մատուցող ընկերությունների ցանկ», <http://www.mminfin.am>

ների փաթեթներից) հատուցումը տրվում է հիվանդանոցային պայմաններում մատուցված ծառայությունների համար, իսկ պոլիկլինիկական ծառայության համար անձը այդ ծառայությունները կարող է ստանալ իրեն սպասարկող պոլիկլինիկայում: Սոցիալական փաթեթի առողջության ապահովագրության բազային փաթեթից առանձնացնենք այն ծառայությունները, որոնք մատուցվում են նաև պոլիկլինիկայում: Դրանք են.

- անվճար բուժօգնությունը սուր, անհետաձգելի և պլանային դեպքերում,

- լաբորատոր և գործիքային ախտորոշչի հետազոտությունները (ապահովագրության դեպքում ցանկը նշվում է, որին հաջորդում է հիվանդանոցային բուժումը),

- տարեկան մեկ անգամ կանխարգելիչ բուժզննում անցնելու հմարավորությունը (պոլիկլինիկայում դրա համար սահմանափակում չկա),

- ապահովագրված անձին արտահիվանդանոցային պայմաններում տրամադրվում է անվճար բուժօգնություն պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարների դեպքում:

Նշված բոլոր ծառայությունները մատուցվում են անվճար նաև պոլիկլինիկայում:

Պոլիկլինիկական ծառայությունների հետ չկրկնվող հիվանդանոցային հատուցվող բուժօգնությունը ներառում է թերապևտիկ և վիրաբուժական հետևյալ բուժումները.

ա) նյարդավիրաբուժական (այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդություններ),

բ) սրտի վիրահատական և ներանոթային միջամտություններ (այդ թվում դեղապատ ստենտներ, սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքեր):

գ) չարորակ նորագոյացությունների ծառագայթային բուժում (հեռահար՝ 35 սեանս, ներխորշային՝ 10 սեանս),

դ) վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա՝ մինչև 10 օր (ըստ նախարարի կողմից հաստատված հիվանդությունների ցամկի),

ե) վնասվածքներ (կոտրվածքներ, հոդախախտումներ, վերքեր, սալցարդեր, պոլիտրավմաններ),

զ) էլեկտրահարություններ, այրվածքներ և ցրտահարություններ:

Նկատենք, որ պոլիկլինիկայում չեն կարող մատուցվել և, հետևապես՝ կրկնվել ա), բ), գ), դ) կետերում նշված ծառայությունների ֆինանսավորումները, որոնք շատ թանկ են, միաժամանակ պատահելու ցածր հավանականություն ունեն: Ծեշտենք, որ, կախված բարդության աստիճանից, պոլիկլինիկայում և հիվանդանոցում կարող են կրկնվել ե) և զ) կետերում նշված ծառայությունների մատուցումը և, հետևապես՝ ֆինանսավորումնը:

Պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժսպասարկման դեպքում ծախսերի տարբերության հիմնական տարրերն են՝ հիվանդասենյակի, հիվանդանոցի կոմունալ և տնտեսական ծախսերը, պետպատվերի շրջա-

նակներում բուժվող հիվանդությունների գծով ապահովագրված անձի կողմից վճարման ենթակա համավճարները: Տարբերություններ կան նաև բուժանձնակազմի վարձատրության չափերի միջև:

Սոցիալական փաթեթի մեջ ընդգրկված անձանց առողջապահության համար նմանատիպ ծառայությունների կրկնությունների մեծությունը գնահատելու համար հարկ է նշել, որ, իհարկե, հիվանդանոցային բուժումը հնարավոր չէ փոխարինել պոլիկլինիկականով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված կրկնվող բուժօգնությունների տեսակները բժշկական առումով դասվում են ոչ ծանր կամ ոչ հիվանդանոցային սպասարկման դեպքերին, և սպառողներն իրենք նախընտրում են դրանց համար ստանալ պոլիկլինիկական ծառայություն, ուստի մեր գնահատմամբ՝ կրկնվող ծառայությունները և դրանց ֆինանսավորումը 60-65 տոկոս է: Հետևապես, հաշվի առնելով սոցփաթեթում ընդգրկված անձանց հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայությունների որոշ բաղադրիչների նմանությունները և կրկնությունը և այն բացառելու խնդիրը, սոցփաթեթի մեջ ընդգրկված անձանց պոլիկլինիկական սպասարկման ֆինանսավորումը նպատակահարմար կլինի իրականացնել (ապահովագրավճարների միջոցով)՝ պոլիկլինիկաներին հատուցնան ծևաչափով ֆինանսավորելով ապահովագրական ընկերությունների կողմից:

Նման լուծման դեպքում պոլիկլինիկական ծառայությունից նույն ծավալով օգտվելու, միաժամանակ սոցփաթեթում ընդգրկված անձանց բազային փաթեթի 3.800 հազ. դրամ ապահովագրական ծածկույթը (կամ ապահովագրական գումարը) մեծացնելու և ծառայությունների տեսակները ընդլայնելու հնարավորություն է առաջանում՝ ներառելով նրա անձնական բյուջեի համար ոչ մատչելի և ավելի թանկ առողջապահական ծառայությունները: Նկատենք, որ եթե տվյալ անձի բուժումը պահանջի հիվանդանոցային տարբերակ, ապա առաջարկվող սխեման դա չի սահմանափակում: Այս դեպքում հարց կառաջանա. բուժանուայությունների ծավալների աճին, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ ապահովագրական դեպքերի աճին գուգահեռ անհրաժեշտ կլինի ավելացնել բազային փաթեթի ապահովագրավճարի 52 հազ. դրամ մեծությունը, քանի որ փոխվում է նաև բազային փաթեթում ընդգրկված ծառայությունների ցանկը: Նման փաստարկի համաձայնելով՝ այդուհանդերձ հարկ է թվարկել դրա վրա ազդող բոլոր այլ գործոնները: Այս դեպքում ապահովագրվողների ավելացումը կատարվում է առավել ցածր ծանրության, թվով շատ և նվազ ծախսատարություն ունեցող, միաժամանակ ավելի բարձր հավանականություն և հստակ վիճակագրություն ունեցող դեպքերի հաշվին (հաշվի առնելով երկար տարիների թվային շարքերը), իսկ բարձր ծանրություն ու մեծ ծախսատարություն և միաժամանակ առավել նվազ հավանականություն ունեցող դեպքերը արդեն ներառված են ապահովագրողների փաթեթներում:

Դրան գուգահեռ՝ նաև անհրաժեշտ է դիտարկել սոցիալական փաթեթի շրջանակներում գործող ապահովագրական ընկերությունների՝ առողջության ապահովագրության պրոդուկտի վնասաբերության աստիճանը, որը հաշվարկվում է՝ տարվա ընթացքում ապահովագրավճարների մեծու-

թյունը հարաբերելով հատուցումների, չվաստակած ապահովագրավճարների պահուստի և վճամների պահուստների միջոցների հանրագումարին: Եթե պրոդուկտի վճամաբերության աստիճանը գերազանցում է 87%-ը, կամ եկամտաբերությունը պակաս է 13 տոկոսից, ապա միայն այդ դեպքում է նպատակահարմար անդրադառնալ ապահովագրավճարների վերանայման խնդրին: Դա այն եկամտաբերությունն է, որը բոլոր կողմերին պետք է ընդունելի լինի անուղղակի պարտադիր ապահովագրության համար, որը ապահովագրողների ապահովագրավճարների պորտֆելի կառուցվածքում զբաղեցնում է երկրորդ տեղը: Մասնավորապես, 2012 թ.⁶ տվյալներով ապահովագրական համակարգի հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքում առողջության ապահովագրությունը կազմել է 35.8%, որը հիմնականում ձևավորվել է սոցիալական փաթեթի առողջության ապահովագրության հաշվին:

Պատկերը առավել ամբողջական ներկայացնելու համար պետք է նշել, որ ապահովագրողները սոցիալական փաթեթի շրջանակներում հավաքում են ավելի շատ ապահովագրական վճարներ, քանի որ սոցիաթեթի շատ սպառողներ նախընտրում են բազային փաթեթի համար վճարել ոչ թե նվազագույն 52 հազ. դրամ, այլ ավելի: Օրինակ՝ ապահովագրական ծածկույթում ներառում են նաև ընտանիքի մեկ այլ անդամի՝ ամուսնուն, կնոջը կամ երեխային, քանի որ սոցիալական փաթեթի համար հատկացված 132 հազ. դրամի մյուս բաղադրիչների համար նախատեսված 80 հազ. դրամը ևս կարող է ուղղվել առողջապահության ապահովագրությանը՝ ավելի ընդգրկուն փաթեթներ ձեռք բերելու կամ ծածկույթում ընտանիքի անձանց ներառելու համար: Այդ գործոնը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ ապահովագրական ընկերություններում սոցիալական փաթեթի շրջանակում մեկ անձի առողջության ապահովագրավճարը միջինը ոչ թե 52 հազ. դրամ է, այլ, մեր գնահատմամբ, ոչ պակաս, քան 80 հազ. դրամ:

Սոցիալական փաթեթում ընդգրկված անձանց առողջության ապահովագրության իիվանդանոցային ծառայությունների որոշ բաղադրիչների ֆինանսավորման և նույն անձանց համար բյուջետային խողովակով հատկացվող պոլիկլինիկական ֆինանսավորման կրկնության հետևանքով առաջանում է սուլ միջոցների անարդյունավետ ծախսում (չասենք վատնում): Մինչդեռ կրկնաֆինանսավորման փոխարեն միջոցները կարող էին ուղղվել նույն անձի համար պահանջվող ավելի խորը մասնագիտացված և բանկարժեք բուժումների ֆինանսավորմանը: Այդ դեպքում կմեծանա բազային ապահովագրական ներկայիս 3.800 հազ. դրամ ծածկույթը և կընդլայնվի ծառայությունների ցանկը: Անհրաժեշտություն առաջանալու դեպքում նույն անձը կկարողանա օգտվել ավելի բանկարժեք առողջապահական ծառայություններից:

Յարկ է նշել, որ ստեղծված իրավիճակը նվազեցնում է մասնավոր բժշկական հաստատությունների կողմից առաջարկվող առավել ծախսատար ախտորոշումների և ստացիոնար վերականգնողական բուժման ծա-

⁶ Տե՛ս «Հայաստանի ֆինանսական համակարգը: Զարգացում, կարգավորում, վերահսկողություն, 2012 թ.», ՀՀ կենտրոնական բանկ, էջ 58, <https://www.cba.am>

ռայություններից օգտվելու հնարավորությունները: Մյուս կողմից, այն թուլացնում է առանց այն էլ հետ մնացած մարզային առողջապահության զարգացումը: Կրկնակի ֆինանսավորումը աշխատում է ոչ թե մարզերի պոլիկլինիկական ծառայությունների, այլ նմանատիպ վճարովի պոլիկլինիկաների օգտին, որոնք փոխկապված են ապահովագրական ընկերությունների հետ և գտնվում են Երևանում: Յետևարար, խսդրի ազդեցությունը գնահատելիս պետք է նկատել, որ ստեղծվում է նաև լրացուցիչ գործոն, որը բացասաբար է ազդում մարզերում առողջապահական ծառայությունների զարգացման և ընդհանուր առնամբ կառավարության հռչակած ՀՀ տարածքային համաշաբաթ զարգացման քաղաքականության վրա: Եթե դրան հավելենք նաև այն, որ սոցիալական փաթեթի առողջության ապահովագրության ծառայության բազային փաթեթի մեջ մտնող հիմնական բժշկական ծառայությունների և դեղերի կողմնորոշիչ գները⁷ դրանք կարգավորող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել են այնպես, որ Երևանում 30-33%-ով բարձր են մարզերի համանման ծառայությունների գներից, ապա պատկերն ավելի ամբողջական կդառնա:

Յետևանքը լինում է այն, որ ոլորտը կարգավորող մարմինը՝ առողջապահության նախարարությունը, կորցնելով «կարգավորվող շուկայի» վրա տնտեսական կառուցակարգերով ներգործելու հնարավորությունը, փորձում է վարչարարական միջոցներով զսպել հիվանդների հոսքը մարզերից դեպի Երևանի բուժհաստատություններ և այդ եղանակով ապահովել մարզային բուժհաստատությունների անհրաժեշտ ծանրաբեռնվածությունը հիվանդներով: Մասնավորապես՝ հիմներին ծննդօգնության սերտիֆիկատներով տրվող բուժօգնությունը մարզերի բնակիչները այսուհետև կարող են անվճար ստանալ միայն իրենց բնակության վայրի տարածքային առողջապահական հաստատությունում⁸: Ի դեպ, տվյալ մոտեցումը վիճահարուց է նաև մարդու իրավունքների սահմանափակման տեսանկյունից, քանի որ մարդիկ անվճար որակյալ առողջապահական ծառայություններ ստանալու առումով բաժանվում են Երկու խմբի՝ մարզերի և Երևանի բնակիչների:

Ներկայացված իրավիճակը վկայում է, որ առողջապահության ֆինանսավորման համակարգը պահանջում է արմատական բարեփոխումներ, քանի որ առկա ծևաչափը նվազեցնում է առողջապահական համակարգի կարողությունները, արդյունավետությունը, սահմանափակում է

⁷ Տե՛ս Սոցիալական փաթեթի առողջության ապահովագրության ծառայության բազային փաթեթի մեջ մտնող հիմնական բժշկական ծառայությունների և դեղերի կողմնորոշիչ գները կարգավորող միջգերատեսչական հանձնաժողովը 2013 թ. փետրվարի 25-ի թիվ 1Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի № 1691-Ն որոշման մեջ ներառված առողջության ապահովագրության շղանակներում բազային փաթեթի մեջ մտնող հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և կոմնորոշիչ գները հաստատելու մասին», <http://www.minfin.am/>

⁸ Տե՛ս «Օննդօգնության հիվանդանոցային ծառայությունների ուղեգորման կարգը և ըստ բժշկական կազմակերպությունների հիմների/ծննդաբերների ուղեգորման և ընդունելության բժշկական ցուցումներն ու պայմանները հաստատելու մասին» և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 22 հունվարի 2013 թվականի № 89-Ա հրամանը ուժը կորցրած ժամանելու մասին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի, 20 մայիս 2013 թ. № 1371 -Ա հրաման:

քաղաքացիների առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունները՝ միևնույն ֆինանսավորման մակարդակի դեպքում, կասկածելի է դարձնում պետական բյուջեից ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների նպատակայնության ապահովումը, լիարժեք չի օգտագործում առողջապահության ծառայությունների միասնական համակարգին մասնակից դարձած ապահովագրողների կարողությունները:

Նկատենք, որ ստեղծված իրավիճակում, երբ առողջության ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունները վերածվել են բուժիաստությունների ֆինանսավորումը իրականացնող միջնորդների, առողջապահության համակարգի ֆինանսավորումը պահանջում է առավել արմատական վերանայում և ամբողջական լուծումների անրագրում: Վերը ներկայացված առաջարկը ինքնին հանգեցնում է բոլորի համար անվճար առաջնային պոլիկլինիկական ֆինանսավորման վերնայմանը: Մասնավորապես, սոցիալական փաթեթում ընդուկված անձանց պոլիկլինիկական ծառայությունները առողջության ապահովագրության խողովակով իրականացնելը նշանակում է որոշակի խնդիր անձանց համար անվճար առաջնային պոլիկլինիկական ֆինանսավորման վերանայում: Ընդ որում, դա չի վատացնում, այլ հակառակ՝ լավացնում է վիճակը միաժամանակ բնակչության երկու խմբի՝ սոցիալական փաթեթի մեջ ներառված քաղաքացիների և մնացած քաղաքացների համար մատուցվող առաջնային պոլիկլինիկական ծառայությունների որակը: Այդ պնդումը հիմնվում է այն բանի վրա, որ առողջության ապահովագրության միջոցով իրականացվող ծառայությունների որակը պետք է անհամեմատ բարձր լինի, բանի որ ապահովագրողները այս դեպքում օբյեկտիվորեն ստանձնում են ծառայությունների որակը վերահսկողի գործառույթը: Մնացած բնակչության պոլիկլինիկական ծառայության որակը ևս պետք է բարձրանա այն պարզ պատճառով, որ հնարավորություն է ստեղծվում ավելացնելու դրանց ֆինանսավորման չափը՝ անմիջապես բյուջետային խողովակով: Բացի դրանից, միևնույն պոլիկլինիկայում սպասարկվող սոցիալական փաթեթի առողջության ապահովագրությունից օգտվող անձին և պետպատվերով այդ ծառայությունից օգտվողին հնարավոր չէ տրամադրել որակապես տարբերություն ծառայություններ: «Պոլիկլինիկաները կհայտնվեն, լավ իմաստով, միանգամից երկու «ստուգող աչքի» դիտակետում՝ պետության համապատասխան մարմինների, որոնք այսօր ել իրականացնում են այդ վերահսկողական գործառույթները, և ապահովագրողի, որը օբյեկտիվորեն ստանձնում է ապահովագրված անձանց շահերի պաշտպանությունը:

Սոցփաթեթի սխեմայից օգտվող անձանց պոլիկլինիկական և հիվանդանոցային առողջապահական ծառայությունների ֆինանսավորումը ապահովագրական խողովակով իրականացնելու դեպքում, ի դեմս ապահովագրողների (հիմնված նրանց տնտեսական շահի վրա), առաջ կգա մի օղակ, որը հիվանդին կդիտի բոլոր մակարդակների բուժիաստությունների կողմից առողջապահական ներգործության մեկ օբյեկտ՝ առողջապահական ծառայությունների մատուցած բոլոր մասնակիցների համա-

տեղ պատասխանատվությամբ: Այդպիսով, այդ մոտեցումը ապահովագրողը կարող է պարտադրել առողջապահության տարբեր մակարդակի առողջապահական ծառայությունների մատուցողներին: Միաժամանակ նկատենք, որ այսօր քաղաքացիների անունից առողջապահության ծառայությունների որակը վերահսկող կամ շահերը պաշտպանող ինստիտուտ, բացի պետական համապատասխան մարմիններից, գոյություն չունի:

Նշենք, որ առաջարկված մոտեցման լուծումները ամրագրելու համար ծախսեր և երկար ժամանակ չեն պահանջվի, փոխարենը անհրաժեշտ է քաղաքական կամք և պրոֆեսիոնալ մոտեցում, որպեսզի ճիշտ հավասարակշռվեն բոլոր կողմերի՝ առողջապահական ծառայություններից օգտվողների, բուժիաստությունների, ապահովագրական ընկերությունների և պետության շահերը: Քաղաքական կամքը (օրենսդրական նախաձեռնությունով հանդերձ) այս դեպքում անհրաժեշտ է, որպեսզի պետությունը հրաժարվի 2006 թ. բոլորի համար ներդրված անվճար պոլիկլինիկական ծառայության մոտեցումից՝ հօգուտ նույն ծառայությունը առողջապահության ապահովագրության միջոցով հատկացնելու առաջն միայն սոցփաթերից օգտվող անձանց համար (հարկ է նշել, որ այդ խնդիրը առաջանալու է նաև առողջության պարտադիր ապահովագրության դեպքում):

ШЕРАЗ ДЖНДОЯН – *О некоторых вопросах финансирования системы здравоохранения РА.* – В статье рассмотрены проблемы финансирования системы здравоохранения Армении и предложены варианты их решения. После официального введения соплатежей за медицинские услуги не был поднят вопрос об оптимальной пропорциональности безвозмездного государственного финансирования через систему госзаказа и указанных соплатежей, что, с одной стороны, стимулировало бы высокое качество услуг, а с другой, обеспечило бы их доступность. Ныне пользователи пакета социальных услуг, предоставляемых государством, обеспечиваются медицинскими услугами, схожими с их безвозмездным первичным поликлиническим обслуживанием. Чтобы повысить эффективность медицинских услуг и их финансирования, предлагается все эти услуги, включая поликлинические, для пользователей пакета социальных услуг финансировать через канал медицинского страхования. При этом учтены целевое использование государственного финансирования, предоставление потребителям качественных и комплексных услуг здравоохранения, а также контроль за лечением застрахованных.

SHERAZ DGNDYAN – *On Some Issues of Health Care Finance of RA.* – The article reviews the existing problems of financing in health system of RA, and presents possible approaches to their solution. The author points that after the introduction of official co-payments for health services, it doesn't place the matter on optimal proportion of state free funding and these co-payments, which on the one hand may stimulate the improvement of the quality of health services, and on the other, at the same time restrain access to health care for users. The author discusses the issue of existing similar

health services and financing for the persons included in the list of beneficiary of the package of social services, provided by the state and gratuitous primary outpatient medical care for the same person. For the improving of the efficiency of health services and their financing the author offers funding all health services, including primary services for persons included in the list of users of the package of social services through the channel health insurance. The positive effect of this approach is justified by comparing the interests of all stakeholders. In this case the aim and effectiveness of public funding, provisions of high-quality and comprehensive health care services to consumers, as well as a direct interest in monitoring the quality of treatment insured by the insurers are taken into account.